№ 134 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 22 1899 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 22 № 134

ՔԱՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կոնստանդին քահանայ Տէր-Ստեփանեանց, յայտնելով իր անմոռանալի ամուսնու

ԵԿԱՏԵՐԻՆԷ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

մահը, որը տեղի ունեցաւ ամսիս 17-ին, Ցխինվալ գիւղում, խնդրում է ազգականներին և ծանօթներին չնորհ բերել հանգուցեալի թաղման հանդէսին, որ տեղի կունենայ կիրակի օր, ամսիս 25-ին, Գօրի քաղաքում: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր վարչութիւն Անդրկովկասում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Նամակ Թիւրքիայից.—Արտաքին լուրեր.—ՀՆԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կանանց կօնգրէսը Լօնդօնում:

ՄԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

—

Կովկասում մինչև այժմ չէին բաժանված մարդկանց և անասունների բժշկութեան վարչութիւնները: Գոյութիւն ունէր միայն մի բժշկական վարչութիւն, որը հրամայում էր և անասնաբուժական մասի վրա: Այս վերջինը գտնվում էր առհասարակ շատ անբաւարար և անմխիթար վիճակի մէջ և շատերը նոյն իսկ չը գիտէին անասնաբոյժերի գոյութեան մասին: Բայց ահա երեք տարի է, որ բարձր իշխանութիւնը առանձին ուշադրութիւն է դարձրել մեր երկրի անասնաբուժական գործի վրա և ուղարկել է Կովկաս մեծ թիվով մասնագէտներ, որոնք մի կողմից հետազօտում են մեր երկրի տաւարապահութեան պայմանները, իսկ միւս կողմից հսկում են, որ անասունների վրա մի տեղում երևեցած վարակիչ հիւանդութիւնները չը տարածվեն երկրի միւս տեղերում: Նախնական փորձերից յետոյ կառավարութիւնը վճռեց հաստատել Անդրկովկասում մշտական անասնաբուժական վարչութիւն, բոլորովին անկախ՝ բժշկական վարչութիւնից:

Անասնաբուժական վարչութիւնը կը գտնվի Կովկասեան կառավարչապետի դիւանում և կը բաղկանայ կառավարչից, կառավարչի օգնականից և վարչութեան մանր պաշտօնեաներից: Այդ վարչութեան է յանձնվում Անդրկովկասի և Սև ծովեան նահանգի անասնաբուժական գործերի ամբողջ հսկողութիւնը և ղեկավարութիւնը: Թէ վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելը և թէ միւս անասնաբուժական կարիքների հոգալը պէտք է կազմի անասնաբուժական վարչութեան անմիջական զբաղմունքների առարկան: Թագաւոր Կայսրը, լսելով պետական խորհրդի կարծիքը, հաստատեց Նրան և այդպիսով նոր վարչութիւնը ստացաւ իրագործութիւն:

Այդ նոր վարչութեան կարևորութիւնը վաղուց էր զգացվում: Անդրկովկասում անասնապահութիւնը կազմում է տեղական գիւղատնտեսութեան ամենախոշոր և ամենանշանակալի բաժիններից մէկը. մինչդեռ գոյութիւն չունէր մի հաստատ վարչութիւն, մի ղեկավար մարմին, որ պաշտպաներ նրան այն սարսափելի վարակիչ հիւանդութիւններից, որոնք խլում էին հազարաւոր գլուխ կենդանիներ ամեն տարի մեր երկրից և դարձնում անասնապահութիւնը անապահով և անձեռնտու մի զբաղմունք: Մենք նորերս յայտնեցինք, որ մեր երիտասարդ գիւղատնտեսներից մէկը մի քանի օրում զրկվեց եր նախիրի նշանաւոր մասից և կորցրեց 5—6000 ռուբլի: Մի ժամանակ նոյն դժբաղդութիւնն ունեցաւ մեր երկրի նշանաւոր անասնապահներից մէկը՝ բարոն Կուչենբախ, որ կորցրեց Շվեյցարիայից բերած թանկագին անասուններ և հազիւ կարողացաւ վերականգնել քայքայված տնտեսութիւնը:

Ցանկալի է, որ նոր վարչութիւնը շուտով կարողանար կազմակերպել կանոնաւոր գործունէութիւն և այդպիսով ոչ միայն ազատէր մեզ մեր մշտական մեծ կորուստներից, այլ և նպաստէր մեր երկրի տաւարապահութեան զարգացմանը ներգործական միջոցներով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Սկսած այն դժբախտ ժամանակից, երբ Թիւրքաց Հայաստանում տասնեակ հազար անուն-նուր քաղաքակիրթ աշխարհի իգական սեռի վիճակին և դիրքին հետ, չեն յուզուիր միանգամայն յարաբերութեամբ հայ կնոջ: Ուրեմն, դաստիարակեալ հայ կինը, որ Թիւրքիայէ դուրս ազատ շրջանակի մը մէջ կապրէ, պէտք է որ նըկատէ և դիտէ ու քննէ հայ կնոջ բարձրացումը, ազնուացումը և մանաւանդ շփումը Եւրոպիոյ մեծ և ազդեցիկ ազգերու նման սեռին հետ, որուն առիթ մը կուտայ Լօնդոնի մէջ գումարված վերջին վեհաժողովը կանանց: Այսպէս անպէտ ինչ չը պիտի համարվի, եթէ գոնէ ընդհանուր տեսութիւն մը ընեմք ընթերցողին վերոգրեալ վեհաժողովին նկատմամբ:

Իզաբէլ Աբէրդէն, Աբէրդինի կոմսուհին, որ կանանց միջազգային վեհաժողովի նախագահն է, շահեկան յօդուած մ'ունի վերոգրեալ ժողովի նկատմամբ «Nineteenth Century» հանդէսին մէջ, ուր համառօտիւ կը պատմէ իգական միջազգային ընկերակցութեանց ծագումը, ներկայ կազմակերպութիւնը և ընթացքը:

Ըստ Աբէրդինի կոմսուհու, կանանց միջազգային ժողովը ի Լօնդոն Հայդ-Պարկի ցոյց մը չէ ազգերու առջև, այլ ազգերու և ընդհանուր մարդկութեան բարելաւութիւնը առարկայ ընող լռիկ գումարում մը, որուն նպատակը և վերջին պատճառը բարին և օգտակարն է, թէև «Contemporary Review» այս վերջին առարկան յոյժ զաղափարական (utopian) կը գտնէ:

Միս Էմիլի Ճէյն իր հրատարակած մի վերջին գրքին մէջ, որ կանուանի «Անգլիացի կանանց տարեգիրքը», կը ցուցնէ, թէ այս դարուս ընկերները կանանց ընկերական գործ հռովմէական կաթոլիկ կանանց միութեան և բարեկամաց ընկերութեան կամ երեսականներու շրջանակին մէջ կը գտնվէր: Բուն գործողներ հոս կամ հոն գտնվող մի քանի սակաւաթիւ քաջ և անձնազոհ կիներէ կը բաղկանային միայն:

Մինչև միս Ֆլորէնս Նայթինգէյլը Անգլիոյ կանանց համար հիւանդապահութիւնը ընտանեկան շրջանակէն դուրս անծանօթ էր: Միս Նայթինգէյլ, որոյ անունը Ղրիմու դժբաղդ պատերազմով հռչակվեցաւ, իր դառն փորձառութիւններով կանանց հիւանդապահութիւնը իբր ուսում և մասն իգական դաստիարակութեան ներմուծեց յԱնգլիա: Թերևս կրնայ ըսուիլ թէ միս Նայթինգէյլ ոչ միայն Անգլիոյ համար, այլ Եւրոպիոյ բոլոր քաղաքակիրթ ազգերուն համար մեծ մարդասիրական գործ մը տեսաւ և յայտնի եղաւ, թէ կինը ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ ազգերու տառապանքներու նուազման, և ենք, որ Կ. Պոլսի հայ մամուլի մէջ գտնէ մի հատ ձայն արձակվեց լուսաւորչականութեան սրտացաւ, բայց տգէտ, անպէտք, ծոյլ բարեկամների դէմ: Կ. Պոլսի յայտնի գրողներից մէկը, Գ. Զօհրապ, մի առաջնորդող յօդուած է տպել «Արևելքի» մէջ և մենք ուրախութեամբ բերում ենք կտորներ այդ յօդուածից:

Իրօք կապշիմ կը մնամ՝ օտար որբանոցներու դէմ մղուած գծուծ վէճը, անտեղի ու ազգամէջ կռիւը տեսնելով: Քիչ անգամ ապերախտութիւնը, նոյն իսկ դատակնիքը, այս աստիճան անպատկառութեան սահմանները կը թեակոխէ. քիչ անգամ ժողովուրդ մը ասանելու նկարագրի ասանկ տխուր օրինակ մը կու տայ:

Կընդունիմ, ափսոս, որ բնաւ օգտուած չըլլանք պատմութեան դասերէն. կընդունիմ որ միշտ այն յեռնեալ ազգը մնացած ըլլանք որ կրօնական պայքարներու մէջ կը դեգերէր ու կը փճանար: Ասոնք բոլորը կընդունիմ. բայց չեմ ընդունիր որ ժողովուրդ մը իրեն ցոյց տրուած կարեկցութեան դէմ, իր հոգոյն մէջ բան մը չը զգայ, իր սրտին մէկ թելը թունդ չելլէ, երախտագիտութեան զեղում մը չը պոռթկայ իրմէ. այլ խորամանկ ու կասկածոտ մարդու պաղարիւնութեամբ՝ հաշիւ, նենգութիւն ու խարդաւանանք փնտռելու ելլէ անոր մէջ ու ամբաստանութեան տակ ձգէ զայն:

Ազգային տիրացուները, սակայն, չեն ուզում որ հարցը երախտագիտութեան վրա դրվի: Նրանք ասում են որ օտարը մեզ մարդասիրութիւն չէ ցոյց տալիս, որպէս զի երախտապարտ լինենք, այլ մարդ է որսում մեզանից որբանոցների միջոցով: Այդ առարկութիւնն էլ յայտնի է յօդուածագրին:

Գիտեմ արդարացումը որուն տակ պիտի ջանան պարտկել այս ընթացքը. մարդասիրութեան համար չէ որ օտարները մեր որբերը կը խնամեն. մարդասիրութեան եկած են մեր մէջ, մեր պապուն՝ Ս. Լուսաւորչի լոյս հաւատքէն զատելու համար մեր զաւակները: Նախ սա ըսեմ, որ մեր ժողովուրդը Լուսաւորչին լոյս հաւատքը պահպանելու համար իր ձեռքէն եկածը ըրած է միշտ, երբեմն իր տունը քակելու ատիճան: Չեմ գիտեր թէ Լուսաւորչին համար ալ ասոր փոխադարձը ըրած ըլլալու մասին վկայութիւն տուող մը կայ արդեօք: Ցանցանքը մերը չէ ուրեմն, եթէ կաթոլիկութիւնը կամ բողոքականութիւնը Լուսաւորչի դէմ ախոյեան կելլան: Չեմ անգիտեր թէ անոնք կը ջանան օգտուիլ մեր կարեկցութեան արժանի վիճակէն. ասիկա ընդհանուր ջանքն է ամեն կրօնքներու, որոնց մէջ մերինն ալ կայ: Զգուշացնենք միթէ անցեալները հրէայ աղջկան մը հայ երիտասարդ մը սիրելէն՝ այդ աղջիկը լուսաւորչական ընելու համար: Ծափահարողներ գտնուեցան մեր մէջ պատրիարքարանի այս յաջողութեանը որ, իրօք, երիտասարդին աղուոր հասակին և դեղին պեխերուն վերագրելի էր միայն: Եւ մի և նոյն անձերն են կամ անոնց համակարծիքները, որ դատապարտելի կը գտնեն՝ երբ ուրիշ կրօնքի վեճակատամարտ դաշտին վրա արիւնաքամ զինուորին ցաւերուն նկատմամբ:

Անգլիոյ մէջ կանանց դաստիարակութեան համար առաջին քայլերը բացվեցաւ 1860-ին: Էդդի Քինիբրա հիմնեց տարի մը ետք դերատի կանանց քրիստոնէական ընկերակցութիւնը, որ բարոյական մեծ մղում առաջ բերաւ անշուշտ յԱնգլիա, քանզի այսօր այդ ընկերակցութիւնը աւելի քան 5000 ճիւղեր և իբր 500,000 անդամներ ունի: Կանանց այս կազմակերպութեան մէջ անմոռանալի դեր կատարեցին գլխաւորաբար Հանա Մուր, Եղիսաբէթ Ֆրայ և Սարա Մարթին: Այսպէս որոշ տեսնուեցաւ միանգամայն, թէ կիներ կրնան միաբանիլ և գործել համբերողութեամբ, հակառակ հին ծթրած զաղափարին:

Անգլիոյ և բրիտանական հողերու վրա կանանց քրիստոնէական կամ կրօնական այս շարժումը, տակաւ ընդլայնելով, համազգային կերպարանք մը ստացաւ: 1882-ին Եղիսաբէթ Քոբի Սթէնտըն իր եւրոպական ճանապարհորդութեան միջոցին տեսութիւններ ունեցաւ նշանաւոր տիկնանց հետ և Անգլիա վերադառնալով, իր բարեկամին՝ օրիորդ Սուզան Անթոնիի հետ խորհեցաւ հիմնել ընկերութիւն մը, որուն նպա-

բաբերող մարդիկ ալ առիթէն օգուտ քաղելու կ'ելլեն մեզի դէմ։

Կերևակայեմ երբեմն ինքնիրենս, աչքի առջև ունենալով մեր ծանօթ մոլեռանդութիւնը, թէ ինչպէս պիտի վարուէինք արդեօք եթէ երբէք զիպուածով մենք ուրիշին կարեկից ըլլալու բաղդը ունենայինք, և մեր դրամովը, մեր վարդապետներուն հսկողութեան տակ որքանոց մը հաստատէինք, օրինակի համար, բողոքական տղաքը պատսպարելու և կրթելու նպատակով։

Մտքէս անգամ չեմ անցներ, որ կրօնական այնքան թոյլտուութիւն չնորհէինք իրենց, որքան մերիները, աղէկ կամ գէշ, կը վայելեն անոնց բացած որբանոցներուն մէջ։

Ի հարկէ, այսպէս խօսել չէ նշանակում ամեն կողմով արդարացնել օտարներին։ Եւ պ. Զօհրապ շարունակում է.

Չեմ ըսեր որ զեղծումներ ալ չեն կրնար գործուած ըլլալ այդ հաստատութեանց մէջ։ Որքանոց բացողներուն ներքին փափաքը, որ ինքնին արդարանալի է ապաքէն, մեր տղաքը իրենց հաւատացած կրօնքին մէջ մեծցած տեսնելու, կրնայ երբեմն տգեղ ձևերով ալ արտայայտուիլ և հարկաւ մեղադրելի կըլլայ այն ատեն։ Թոստովանինք նախ որ մինչև ցարդ ո և է նշանակելի բան չէ յայտնուած։ Ընդհակառակը, պէտք է ճանչնալ որ չափազանց սեղմումներ հաստատած չեն մեր մանուկներուն դէմ։ Գանգատի նիւթ սեպուած բաները չեն արդարացներ այն նախատինքները, որոնց տակ ծածկեցինք այդ որբանոցները։ Եւ պէտք չէ զարմանալ եթէ ատոնց պահպանումը ստանձնողները, վերջ ի վերջոյ դառնացած՝ կռնակէն դարձնեն մեզի. այն ատեն Պատրիարքարանի հոչակաւոր որբանոցները չեն որ փողոցը մնացած մեր մանուկները պիտի պատսպարեն։ Հայ ժողովուրդը չի կրնար և պէտք չէ որ ժառնայ իրեն եղած բարիքը, միմիայն կրօնական խուլ մոլեռանդութենէ մը մղուած. կը պահանջեմ որ ժամանակագրական սխալները սրբագրենք քիչ մը։

Եթէ մեր մէջ այսպիսի հասարակ ճշմարտութիւններ դեռ պէտք է քարոզել, պատճառը արդեօք այն չէ, որ ասպարէզից հեռացել են համարձակախօս, ազատ մտքի և դատողութեան տէր մարդիկ, ամեն ինչ թողնելով տիրացուներին և պնակալէզներին։ Կ. Պոլսի լրագիրներում մենք վաղուց այսպիսի հոդով և այսպիսի կտրուկ, ուժեղ ոճով գրած յօդուած չէինք կարդացել։ Եւ ով գիտէ, եթէ այդպէս խօսողներ շատ լինէին, գուցէ հայկական տիրացութիւնը մի բան հասկանար, թէև չենք հաւատում, աչքի առաջ ունենալով մեր հին տիրացուներին, մանաւանդ նորերին, որոնց ցիլինդրների տակ պատսպարված ուղեղները տառապում են կարծրութիւնից և հին ժանգի կերակուր են դարձած...

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յուլիսի 19-ին

Բագուն կորցրել է իր առևտրական աշխուժութիւնը։ Չը կայ այլ ևս մօտիկ անցեալի տենդային «առ ու ծախը», չը կայ այն կախարդական իրարանցումը, որ օրերով, ժամերով, նոյն իսկ բոպէներով անփողին փողաւոր էր դարձնում, միջակ փողաւորին՝ միլիոնատէր։ Ամեն ինչ խաղաղ է. հրապարակի վրա, բացի նաւթ գնելու պահանջից, նկատելի չէ ուրիշ որև է պահանջ։ Դադարել է իսպառ անչարժ կայքերի՝ նաւթաբեր հողաբաժինների, տների, տընատեղերի առուծախը. և ոչ միայն դադարել, այլ և կորցրել է մօտիկ անցեալում ձեռք բերած առասպելական հրապոյրը։ Առնելու պահանջ չը լինելու պատճառով՝ այդ անշարժ կայքերը կիսով չափ կորցրել են իրանց արժէքը։ 10—15 հազար բուբլու արժէք ստացած մէկ դեսեատին հողը այժմ կարելի է ձեռք բերել 5—8 հազար բուբլիով։ Այդպէս էլ քաղաքի հողերը, այս կամ այն ընկերութեան բաժինները և այլն և այլն։ Թէև նոյն երևոյթը նկատելի է լինում այս կամ այն չափով ամենայն տարի, պարբերաբար տարվայ այս եղանակին՝ յունիս, յուլիս և օդոստոս ամիսներում, բայց այս տարի աւելի է աչքի ընկնում, աւելի զգալի է, որովհետև փող չը կայ։

Փողի ընդհանուր պակասութիւն է։ Փողի պակասութիւն են քաշում ոչ միայն նոր առևտրականները, ոչ միայն մանր վաճառականները, այլ և շատ «սօլիդնի» ֆիրմաներ... Նոյն իսկ բանկերում փող չէ մնացել։ Անցեալ տարի բանկերը ձգտում էին աւելի փող բաց թողնել, քան թէ ընդունել, նոյն իսկ մեծ գումարներ դժկամակութեամբ էին ընդունում ընթացիկ հաշիւներում. իսկ այս տարի՝ չը նայելով որ զեղջման տոկոս 6—6½-ից բարձրացրել-դարձրել են 7—7½-ի, այնու ամենայնիւ շատ մուրհակներ չեն ընդունում, յետ են դարձնում ոչ պակաս յայտնի առևտրականների մուրհակներ։

Մասնաւոր փողատէրեր անցեալ տարի ուրախութեամբ 7—8—9 տոկոսներով փող էին բաց թողնում, իսկ այս տարի 12 և աւելի մինչև անգամ տոկոսներով մուրհակներ չեն զեղջում... Տեղիս տասնեակաւոր միջնորդների և հարիւրաւոր «зайчикъ»-ների միակ բան ու գործը այժմ մուրհակներ պտտեցնելն է։ Օր չէ անցնում, որ զեղջելու համար հարիւր հազարների մուրհակներ ձեռքից ձեռք չանցնեն, պտոյտներ չը գործեն... Եւ եթէ չը լինէին յայտնի խնամիական կապեր բանկի կառավարիչների հետ, որոնք յաճախ անկարելին կարելի են դարձնում, անկասկած շատ շատերը հաղիւ թէ կարողանային ծայրը ծայրին հասցնել և մուրհակները ժամանակին ազատել բողոքի մատնվելուց... Անսպասելի և վտանգաւոր դրութիւն, մի դրութիւն, որ անկարելի է դարձնում գործավարութեան ընթացիկ ծախքերը հոգալու։ Այնպիսի առևտրականներ են երբեմն 200—300 բուբլու պէտք զգում, այնպիսի մարդիկ են փողի հարկաւորութեան համար սրան, նրան դիմում, որ մարդ ապշում է։ Ժամանակին առատիկ չեն վճարում, 50—60 բուբլու հաշիւը ամիսներով ձգձգում են, չեն վերջացնում... Եւ այդ ոչ թէ գիտութեամբ են անում, այլ ուղղակի չեն կարողանում հասցնել, պատրաստ փող չունեն որ տան։

Ի՞նչ եղան Բագուի փողերը. ինչից առաջ եկաւ այս ճգնաժամը։ Ինչու՞ համար փողի պակասութիւնը աւելի չշափելի պիտի դառնար այժմ, մօտիկ անցեալի փողի այն աստիճան առատ ժամանակամիջոցից անմիջապէս յետոյ։ Ինչու՞ պիտի փողի նեղութիւն կրեն աւելի արդիւնաբերական կամ այլ և այլ ձեռնարկութիւն ունեցողները։ Պատասխանը—ըստ իս—պարզ է։ Որովհետև ձեռնարկութիւնների թիւը անթիւ անհամար անգամ աւելացել, բազմացել է։ Անցեալի առևտրական «հրապուրիչ խաղի» տպաւորութեան տակ միլիօնատէրը ձեռնարկել է երկու միլիոնի գործ, հարիւր հազար ունեցողը՝ երկու հարիւր հազարի գործ, 10—20 հազար բուբլի ունեցողը՝ 50—100 հազարի գործ. նոյն իսկ կօպէկ չունեցողը, ռոճիկով ապրողը, «պարտք» վերցնելով, մուրհակներ տալով՝ նոյնպէս գործ է սկսել, նոյնպէս բաժիններ է ձեռք բերել զանազան ընկերութիւնների մէջ...

Եւ այսպէս՝ որ կողմը նայում ես, նոր գործ, նոր ձեռնարկութիւն։ Սկսած յետին ծառայողից, յետին արհեստաւորից մինչև կառավարիչները թաթախված են նոր գործերի մէջ. որը հող է վերցրել, տներ է շինում, որ քրէհով տայ, որը արհեստանոց է բաց արել, որը նաւթահանք է ձեռք բերել, ընկերութիւն կազմել, որ միացեալ ոյժերով նաւթ արդիւնաբերէ, և այլն և այլն։ Ցաճախ նկատում ես մի և նոյն մարդուն մանակից զանազան ձեռնարկութիւնների մէջ մի քանի հարիւր հազար բուբլու բաժիններով, այն ինչ Նրա ողջ ակտիւը 80—100 հազար բուբլուց չէ անցնում... Նոյն չափով և ուրիշները ուրիշ ձեռնարկութիւնների մէջ։ Հաշիւը պարզ է. ձեռնարկութիւնները անպայման շահ են խոստանում, մանաւանդ որ պահանջվող գումարը միանգամից չէ մտցնվում գործի մէջ, այլ մաս-մաս։ Վերցնելով մեծ գումարի բաժիններ, աչքի առաջ են ունենում այն հանգամանքը, որ առաջին վճարը (внось) տալով՝ տէր են դառնում թէկուզ առժամանակ բաժինների մեծ քանակութեան, այնպէս որ մինչև երկրորդ վճարի ժամանակ, գործը աւելի արժէք ստանալով՝ բաժիններից մի քանիսը կարող կը լինեն վաճառել աւելի թանգ գնով և երկրորդ վճարը մտցնել, իսկ մնացած բաժինները կը մնան իրանց ձրի և այլն... Պատահում է, ի հարկէ, որ այդ կանխակալ դատողութիւնը իրագործվում է, սակայն պատահում է և ընդհակառակը. վրա է հասնում երկրորդ, երրորդ վճարների պայմանաժամը, փող չը կայ, կրեդիտ էլ չը կայ... Եթէ գործը շարունակվի՝ անկասկած արդիւնաւէտ կը լինի, սակայն շարունակելու համար փող է հարկաւոր, որ չը կայ։ Կրեդիտ պահպանելը թէ բանկերում և թէ՝ մասնաւոր դրամատէրերի մօտ տեղի է ունենում մինչև այն ժամանակ, երբ պայմանաժամին կարողանում են մուրհակը ազատել, հակառակ դէպքում, երբ հարկադրված են լինում պայմանաժամը վերանորոգելու փորձեր անել, խնդրել, վարկը կրկնակի կերպով ընկնում է և հէնց այդ է պատճառը, որ շատ շատերի մուրհակները բանկերում կամ շատ դժուարութեամբ են ընդունում, կամ բոլորովին չեն ընդունում՝ չափից դուրս շատ մուրհակներ տուած լինելու պատճառով...

Մի կողմից տոկոսով փող տուողները սպասում են, որ պայմանաժամին տուած փողերը յետ ստանան, չեն ստանում, փոխանակ փողի գալիս ազաչում, պաղատում են մուրհակները վերանորոգել, նոր պայմանաժամ որոշել. միւս կողմից նոր ձեռնարկված գործերը ձեռնարկողներին դեռ արդիւնք չեն տալիս, այլ շարունակ փող են պահանջում։ Որտեղից գտնել այդ փողը, երբ կրեդիտորները ոչ միայն այլ ևս մուրհակով փող չեն ուզում տալ, այլ և տուածը պահանջում են՝ աչքի առաջ ունենալով ակտիւ պասսիվի հաւասարակշռութեան զգալի տարբերութիւն... Ահա հոդեկան տանջանքների, հալ ու մաշ անող մտատանջութիւնների ու յուսահատութեան բովը։ Ճգնաժամը սպառնալի և վտանգաւոր է։ Եթէ առաջիկայ աշնան ևս երկրի դրութիւնը նոյնը մնալու լինի, անկասկած տեղի կունենայ «մեծ տրաքոց», որ կործանելու չափ կը ցնցէ, կը տապալէ շատ ձեռնարկութիւններ, նոյն իսկ աչքի ընկնող ընկերութիւններ...

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բերլին, յուլիսի 20-ին

Բերլինի հայ ուսանողութիւնը խնդրում է հեռանալը հրատարակել ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, որով չնորհապարտ պիտի կացուցանէք մեզ։

Ներկայ տարվայ փետրվարի կէսերին Կովկասի վրայով Բերլին հասաւ պ. Գրիգոր Թոքաթլեան, քնիկ սամսօնցի, մօտ 22 տարեկան, միջակ-փոքր հասակով. խօսում էր բացի հայերէնից՝ թուրքերէն, ֆրանսերէն և մի քիչ անգլիերէն։ Ամառային սեմեստրն սկսելիս ուսանող չը գրվեց դեռ և, ըստ երևոյթին, ուսանելու մտադրութիւն չունէր, այնու ամենայնիւ, ընկերներից նկատվում էր իբր ուսանող և վայելում էր կատարեալ վստահութիւն և ընկերակցութիւն։ Ուսանողներից շատերից և ուսանողական օգնող-կասսայից դրամական մեծ և փոքր քանակութեամբ փոխառութիւններ անելով, խոստանում էր շուտով վերադարձնել. բայց անխոստմնապահ և տարօրինակ վարմունքը ի վերջոյ կասկածներ ծնեցրեց ուսանողների մէջ. և ահա մի օր անհետացաւ Բերլինից, առանց իր հեռանալու մասին որ և է մէկին լուր տալու։

Ուսանողութեան կողմից կատարված քննութիւնների արդիւնքը ցոյց տուեց, որ պ. Թոքաթլեան, անյայտ բարեգործութեան պատրուակի ներքոյ, մի պարոնից փող է կորզել և պարոնի պարտապանից պահանջել է պարտքը և ստացել, առանց պարտատիրոջ գիտութեան։ Նոյն իսկ ընկերների առաջնորդութեամբ մուրք գտած պանսիօններում ճաշդիները և վերջին քընակարանի վարձը չէ վճարել։ Ընդհանուր գումարը հասնում է մօտ 700 մարկի։ (Պ. Թոքաթլեանի այդ արարմունքների մասին մասնաւորապէս արդէն յայտնված է եղել կովկասեան թերթերում)։

Ուսանողական դիմակի տակ անվայել վարմունքներից զգուշացնելու համար, ուսանողութիւնը խնդրում է ձեզ հրատարակել սոյն յայտարարութիւնը։

Գէորգ Մէլիք-Կարագեօզեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետևեալ համարը, Մայր Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան տօնի պատճառով, լոյս կը տեսնի ոչ թէ ուրբաթ, յուլիսի 23-ին, այլ շաբաթ օր, յուլիսի 24-ին։

—

«Մշակի» անցեալ համարում մենք յայտնեցինք, որ պրոֆէսօր Դօկուչաեվի արշաւախումբը վերջացնում է Արևելեան Անդրկովկասի հետազօտութիւնը և շուտով կը տեղափոխվի Դաղստանի կողմերը։ Դօկուչաեվ Ալէքսանդրապօլում բաժանեց իր խումբը երկու մասի. ինքը, իր աշխատակից Մեչչերսկու հետ, վերցրեց Ալէքսանդրապօլի գաւառի այն մասը, որ գտնվում է Արագածի շուրջը, Կարսի նահանգը և Սուրմալուի գաւառը, իսկ միւս երկու հետազօտողները՝ Նաբօկիխ և Կօրչեվսկի՝ ուղևորվեցին Փամբակ, Լօռի, Նոր-Բայազէտ, Շուշի և Ելիսաւետպոլ վերադարձան Թիֆլիս։ Հետազօտողները Ալէքսանդրապօլի մէջ և շրջակայքում գտան հողի մէջ միայն 2% սևահողային մաս, Փամբակում 2—2½ և քիչ դէպքերում 3%, Լօռու գաւառամասում 3—4%։ Դիլիջանից վերև Սեմեսնօվկայի շրջակայքում նրանք չը գտան սևահող, այլ այնպիսի հող, որ յատուկ է Ռուսաստանի հիւսիսային նահանգներին։ Ջիրուխլու գիւղի մօտ արդէն սկսվում է նկատվել դարձեալ սևահող, որ անհետանում է Սևանայ լճի ափերին։ Եղենովկայում և Նոր-Բայազէտում կայ նոյնքան սևահող, որքան Ալէքսանդրապօլի կողմերում։ Հետաքրքիր է, որ Նաբօկիխի ուղևորվելիս Փամբակ, Լօռի, Նոր-Բայազէտ, Շուշի և Ելիսաւետպոլ վերադարձան Թիֆլիս։ Հետազօտողները Ալէքսանդրապօլի մէջ և շրջակայքում գտան հողի մէջ միայն 2% սևահողային մաս, Փամբակում 2—2½ և քիչ դէպքերում 3%, Լօռու գաւառամասում 3—4%։ Դիլիջանից վերև Սեմեսնօվկայի շրջակայքում նրանք չը գտան սևահող, այլ այնպիսի հող, որ յատուկ է Ռուսաստանի հիւսիսային նահանգներին։ Ջիրուխլու գիւղի մօտ արդէն սկսվում է նկատվել դարձեալ սևահող, որ անհետանում է Սևանայ լճի ափերին։ Եղենովկայում և Նոր-Բայազէտում կայ նոյնքան սևահող, որքան Ալէքսանդրապօլի կողմերում։

տակը պիտի լինէր օգնել կնոջ ընկերական գործերու մէջ, առանց ազգային խորութեան։ Տարի մը ետք Լիվրպուլի մէջ դումարվեցաւ ժողով մը և այդ ժողովը լուծվեցաւ տիկին Մարկարէթ Փարբրի և տիկին Պրիսկիլա Միլարէնի առաջարկութիւնով՝ մասնաժողով մը ընտրել կազմելու համար կանանց միջազգային ընկերակցութիւն մը, որ պիտի գործէ նախ թղթակցութեամբ քաղաքակիրթ երկիրներու մէջ գտնվող գործիչ տիկնանց հետ։ Առաջարկութիւնը ընդունվեցաւ և կազմվեցաւ, ինչ որ կը կոչվի «International Woman Suffrage Association»։

Մասնաժողովը, որ ընտրվեցաւ այսպէս, կը բաղկանար քառասուն և մէկ անդամներէ. ատոնք կը ներկայացնէին գլխաւորաբար Անգլիա, Սկովտիա, Իրլանդա, Ֆրանսա և Միացեալ-Նահանգներ։ Մասնաժողովը կատարեց իր պարտականութիւնը և թղթակցութիւն ունենալով մեծ տիկնանց հետ, սերտ կապվեցաւ վեհ խորհրդի իրագործման, այնպէս որ 1888-ին կարելի եղաւ կազմել կանանց միջազգային խորհուրդը, որուն նախագահ ընտրվեցաւ Ֆրանսէս Ուիլլբրտ։ Կանանց միջազգային խորհուրդը սակայն հինգ տարիներ նշանաւոր գործ մը չը կրցաւ կատարել. գործը թէև անուանապէս միջազգային էր, սակայն աւելի բրիտանական հանգամանք ունէր։ Կանանց միջազգային նշանաւոր շարժումը եղաւ Զիւգակօի Կօլումբեան ցուցահանդէսէն, ուր կանանց խորհուրդը ճշմարիտ հասկացողութեան մը կրցաւ գալ ընկերական ընդհանուր բարեկամութեան պայմաններուն նկատմամբ։

Զիւգակօյի Կօլումբեան վեհաժողովին առթիւ նախագահ ընտրվեցաւ Աբէրդընի կոմսուհին։ Ժողովին ներկայ էին եօթանասուն և ութն տիկին պատուիրակներ, որք կը ներկայացնէին երեսուն երկու ազգութիւններ, որոց մէջ կը գտնվէին միանդամայն Ռուսիա, Ցունաստան, Պարսկաստան, սակայն ոչ Թիւրքիա։

Անտարակոյս յոյժ երկար պիտի լինի, եթէ մանրամասնօրէն նկարագրի սոյն միջազգային ընկերակցութեան կանոնները, գործերու մեթոդը և այլն, սակայն հաճառօտիւ սա կրնայ ըսվիլ, թէ իրեն առարկան եղաւ բոլոր ազգերու, դաւանութեանց և դասակարգերու մէջ հաստատել խորհրդոց և համակրութեան միութիւն մը։ Ընկերակցութիւնը իրեն նշանաբան ըրաւ քրիստոնէութեան մեծ հիմնադրին սա պատուէրը, թէ «ինչպէս որ կուզէք մարդիկ ձեզ ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք»։

Այս է, ահա, կանանց միջազգային խորհրդի հաճառօտ պատմութիւնը, որ է պակ ներկայ քաղաքակրթութեան, ազատ բարոյականի լոկ խղճի ձայնին վրա հիմնված. այս խորհրդի անդամները և առաջնորդները միջազգային կանայք են, որք, ինչպէս կըսէ Լէդի Աբէրդին, նուազ չեն սիրեր իրենց հայրենիքը, որովհետև աւելի կը սիրեն մարդկութիւնը։

Լօնդօնի մէջ դումարված վերջին խորհուրդը քննեց այն բոլոր ասպարէզները, որոնց մէջ կինը կը գտնվի և կրնայ գտնվիլ, քննեց կնոջ կացութիւնը իբր մայր իր տանը մէջ, իբր ուսուցիչ՝ վարժարանին մէջ, իբր գործաւոր՝ գործարաններու մէջ, իբր հիւանդապահ՝ հիւանդանոցներու մէջ, իբր գրող՝ հրապարակի վրա, իբր դերասանուհի՝ բեմին վրա։ Իրենց միակ առարկան եղած է դրապէս թեթևացնել բեռը, որ դրված է այր մարդու ուսերու վրա և տանել զանի իբր անոր հաւասարը և սիրոյ օգնականը։ Այս կազմակերպութիւնը դեռ հասած չէ իր գաղափարական առարկաներուն և վերջին պատճառին, սակայն յոյսեր կան, որ պիտի զօրանայ մեծապէս և իր ճիւղերն պիտի ունենայ նոյն իսկ ի կեդրօնական Աֆրիկէ, և ծայրագոյն Արևելք, Չին և Ճաբոն։ Անտարակոյս 1900-ի Պարիզեան ցուցահանդէսին առթիւ նոր խորհուրդը աւելի պայծառ գործունէութիւն մը պիտի ապացուցանէ և պիտի ներշնչէ մարդուն աս խորհուրդի վեհութիւնը և ճշմարտութիւնը՝ թէ կինը ընութեան պակին է։

Ցուսանք ուրեմն թէ յառաջիկայ խորհրդի առթիւ հայ տիկնանց զանազան ընկերակցութիւններ իրենց ներկայացուցիչները և բաժինը պիտի ունենան և պիտի գրաւեն ուշադրութիւն մեծ մարդասէր կանանց, որ չեն արհամարհեր փոքր և մոռցված ազգի վիշտերը, եթէ վերականգնումի ոգին և շարժումը տեսնեն նախ մեր կողմէն։ Քանզի աւելի գործնական արդիւնք կրնայ սպասվիլ այս լռիկ ժողովէն, քան ժողովէն, որ գումարած է ի Հաագ, և եթէ երբէք կարելի է հաստատել Միջազգային Ատեան մը և միջազգային համաձայնութիւն մը, կանանց միջազգային խորհուրդը նախաշաւիղն պիտի լինի անոր։

Սպասենք ուրեմն նոր դարագլխի յայտնութեանց։

Զարմայր

մերում, իսկ դէպի լեռները տանող ճանապարհների վրա կան շերտեր 3—5% սնահող պարունակող։ Սևանի լճի ափին գտնվող Բասարգեչար գիւղից սկսած այն գիծը, որ տանում է դէպի Քարագլուխ, չունի սնահող, որի գլխաւոր պատճառը հետազօտողները համարում են սաստիկ քամիները, որ այդտեղ փչում են ամիսներ շարունակ։ Մագրա և Զօդ գիւղերի շրջանում կան տեղեր, ուր հողը ունի 3—5% սնահողային մասեր։ Շուշին և նրա շրջակայքը չունեն սնահողային մասեր։ Քիրս լեռան լանջերի վրա և Շուշուց ներքև դէպի պօստային ճանապարհին գիծը կան առանձին շերտեր, որոնք պարունակում են 2—4% սնահողային մասեր։ Հետազօտողները ամեն տեղերից վերցրել են հողի նմուշներ, որոնց պէտք է հետազօտեն առաջիկայ ձմեռվայ ընթացքում ճիշդ կերպով և ապա ամբողջացնելով իրանց աշխատութիւնը՝ կազմեն Անդրկովկասի հողերի նկարագիրը։

—

Շուշու գաւառապետը պաշտօնապէս հեռագրել է երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօրին, որ յուլիսի 18-ին մինիստրութեան պաշտօնեայ Պարվիցկիյ, Լիսագօրսկից (Թիւջրից) Շուշի վերադառնալու միջոցին, ընկել է կառքից դէպի ձորը և մեռել։ Պարվիցկիյ գնացել էր Շուշի յատուկ յանձնարարութեամբ՝ տեղեկութիւններ ժողովելու այնտեղ գտնվող այն ազատ հողերի մասին, որոնք կարող են յարմարութիւն ունենալ նոր գիւղեր դնելու համար։ Պարվիցկիյ մօտ տասնհինգ տարի է, որ Անդրկովկասումն է գտնվում և իր պաշտօնով զբաղված էր գիւղացիների հողաբաժինների ուսումնասիրութեամբ։ Թաղումը տեղի ունեցաւ Շուշում, երեքշաբթի, յուլիսի 20-ին։

—

Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքի առևտրական մուզէյը դիմել է շատ տեղերի և նրանց թւում Անդրկովկասի հասատութիւններին և առևտրականներին՝ հրաւիրելով մասնակցել այն արդիւնագործական ցուցահանդէսին, որ բացվելու է Ֆիլադելֆիա քաղաքում։ Սակայն ցանկացողներ մինչև այժմ դեռ չեն յայտնվել։ Որքան մեզ յայտնի է, Բաթումում ապրող Յակոբ Վեղեդեան անունով մի պարոն մտադիր է ուղևորվել Ամերիկայի ցուցահանդէսը և վերցնել իր հետ մեր երկրի արդիւնքների նմուշներ։

—

Բաղուի մօտ գտնվող Բալախանիի նաւթային շրջանում կազմվում է «Կաղբէկ» անունով նաւթագործական մի ընկերութիւն 2 միլիոն բուբլի հիմնական դրամագլխով, բաժանված 8000 ակցիայի, իւրաքանչիւրը 250 բուբլի արժողութեամբ։ Հիմնադիրներն են՝ Ս. Սալոմոն և Մ. Բունիաթով։ Ընկերութիւնը պէտք է շահագործի գլխաւորապէս Բալախանիի №№ 19 և 20 նաւթահողային բաժինները և ուրիշ հողեր։

—

Ստացանք երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօրի լոյս ընծայած մի նոր հրատարակութիւնը, որի մէջ զետեղված են գիւղատնտես պ. Կանդուրալեանի և պ. Ա. Բոլլովի աշխատութիւնները։ Կանդուրալեան նկարագրել է Գէօկչայի գաւառի մրգաբուծութիւնը, իսկ Բոլլով՝ Երևանեան նահանգի մրգաբուծութեան դրութիւնը։ Նկարագրութեան կցված է մրգերի զանազան տեսակների նկարագիրը։

—

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ այժմ հարց է յարուցած որոշելու այն դէպքերը, երբ ապրանքատէրը իրաւունք ունի հրաժարվել ապրանքից և նրա փոխարէն պահանջել ապրանքի գինը։

—

Ստացանք Պարսկաստանի Նոր-Զուղայում տպված մի գրքոյկ՝ «Ուսումնարան չինենք» վերնագրով, բաղկացած փոքրադիր 36 երեսից։ Գրքոյկի մէջ խօսվում է Նոր-Զուղայի օրիորդաց ուսումնարանի չինութեան և դպրոցի օգտին արված նուիրատուութիւնների մասին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Դերասան Վլոյը՝ իր ամուսնու և տեղական սիրողների հետ՝ պատրաստվում է մեր քաղաքում մի քանի ներկայացումներ տալու։ Ներկայացումներից մէկը կը լինի էժանագին-ժողովրդական, մէկը՝ մանկական, իսկ երկուսը՝ բարեգործական նպատակով, այն է՝ «Եղբայրական օգնութիւն» ժողովածուի խմբագրութեան և ռուս սովեալների օգտին. վերջին նպատակով տրվելիք ներկայացումը կը լինի հայերէն, ռուսերէն և վրացերէն լեզուներով։ Տեղական սիրողները, բնականաբար, ամեն կերպ աջակցում են յարգելի դերասանին. այդ պատճառով յուսով ենք, որ ներկայացումները աջող կը լինեն։ Ցանկալի է, որ տեղական հասարակութիւնը ևս, աչքի առաջ ունենալով այդ մէկը միւսից գեղեցիկ նպատակները, նպաստէ ներկայացումների նիւթական աջողութեանը։ Առաջին ներկայացումը կը լինի Վարդավառի օրը, որի համար պատրաստվում է Մոլիէրի «Ագահ» (կամ «Փլատ») պիեսը»։

—

Գանձակի գաւառի ՉԱՐԴԱԽԼՈՒ գիւղից գրում են, որ այս տարի հունձը այնտեղ առատ է և գիւղացիները յոյս ունեն այս տարի մասամբ լրացնել անցեալ տարվայ կարկուտից առաջացած վնասը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ցայտնի է, որ Հին-Նախիջևանի ամբողջ գաւառում կամայականութիւնները ծայրայեղութեան են հասել, մանաւանդ գիւղերում, որոնք կարողութիւն, միջոց և դիտութիւն չունենալով բողոքելու կատարված օրինազանցութիւնների դէմ, մնում են գերութեան մէջ, բառիս բուն նշանակութեամբ։ Չրի սով է, երկնքից կրակ է թափվում, տասնեակ ամիսներով մի կաթիլ անձրև չէ ընկնում քարացած երկրի վրա, բայց, ըստ հնաւանդ սովորութեան, Հին-Նախիջևանի կողմերում ջրաբաժանութեան գործի մէջ տեղի են ունենում մի շարք զեղծումներ, կաշառակերութիւններ և անկանոնութիւններ։ Պ. նահանգապետը, որը ահա մի շաբաթ է շրջում է այս կողմերում, յիշեալ զեղծումները տեսնելով, հրամայեց հեռացնել անմիջապէս նախկին միրաբ Կադիմովին, որի եղբայրը մի և նոյն ժամանակ կանդիդատ էր, որոնք ահա մի քանի տասնեակ տարիներ ժառանգաբար ծծում էին խեղճ ժողովրդի արիւն-քրտինքը։ Հեռացնելով միրաբին և թէ նրա կանդիդատ եղբօրը, պ. նահանգապետը այս յուլիսի 12-ին հեռագրով տեղեկացրեց Թիֆլիսի Կովկասեան ջրերի տեսչին (инспектору водъ на Кавказѣ)։ Զայն կայ, որ պ. նահանգապետը շուտով պաշտօնանկ պիտի անէ մի քանի տանուտէրերի, որոնց զեղծումները անսահման են...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, յուլիսի 25/13

Համարեա անհնարին է այժմ Ֆրանսիայի հասարակական կեանքի որ և է խոշոր երևոյթի մասին յօդուած գրել առանց այս ու այն կերպով Դրէյֆուսի գործը կամ նրա հետ յարաբերութիւն ունեցող որ և է խնդիր յիշատակելու։ Հազարգլխեան մի հրէշի պէս այս գործը ծածկել է ամբողջ ֆրանսիական հողը և նրա ազդեցութիւնն երևում է այս երկրի հասարակական կեանքի համարեա իւրաքանչիւր երևոյթի վրա։ Կառավարութիւն, զօրք, մամուլ, դրականութիւն, ակադեմիա, հաւալսարան, դպրոցներ, թատրոն, եկեղեցի իր կղերականութեամբ, քաղաքական զանազան կուսակցութիւններ՝ նացիոնալիստներ, սոցիալիստներ, արքայականներ, չափաւոր աղատամիտներ ամենքը, առանց խտրութեան, աւելի կամ պակաս չափով մասնակցութիւն են յանձն առել այդ խնդրի մէջ, որ կամաց-կամաց բարդանալով ու ընդարձակվելով՝ այսօր ընդունել է արդէն շատ որոշ գոյն, դարձել է դասակարգերի կատաղի մրցութիւն։

Պայքարն այնպէս խիստ է և նրան նիւթ կազմող խնդիրն այնպէս կերպարանափոխվել է՝ կապվելով դասակարգերի անմիջական շահերի հետ, որ Դրէյֆուսի խնդրի վերջնական լուծումով հազիւ թէ մրցութիւնն իսպառ դադարի, այլ հաւանականաբար նա կը շարունակվի ուրիշ կերպարանքի տակ։ Որովհետև խնդիրն այժմ բոլորովին Դրէյֆուսի անձնաւորութիւնը և նոյն իսկ նրա անարդար կերպով դատապարտութիւնը չէ, դա գործի արտաքինն է, իսկ բունը, ներքինը, այն է, թէ ով է երկրի տէրը—զօրքը և կղերականութիւնը, թէ քաղաքացիական իշխանութիւնն իր դեմօկրատական հանրապետական կարգերով։ Այսպիսի հարց դնելուց յետոյ, բնականապէս երևան են գալիս և չչափվում անթիւ այլ խնդիրներ, որոնց այս կամ այն ձևով լուծումից է կախված, թէ որ կուսակցութիւնը կը յաղթանակի։ Եթէ սրա վրա աւելացնենք և այն, որ երկրի ընդհանուր կրիզիսից օգտվելով միւս կողմից արքայականները հնարաւոր չափով բորբոքում են այդ կրակը, աշխատելով տապալել հանրապետական կառավարութիւնը, ապա հասկանալի կը լինի, թէ ինչու Դրէյֆուսի խնդիրը այսքան մեծ ծաւալ ընդունեց, ինչու ամբողջ Ֆրանսիան և նոյն իսկ ամբողջ աշխարհը զբաղվեց և զբաղվում է նրանով։ Այս խնդրի պատճառով Ֆրանսիայում այժմ բազմաթիւ նախկին բարեկամներ՝ թշնամիներ են դարձել, նախկին թշնամիներ բարեկամացել են, քաղաքական կուսակցութիւններ կան, որոնք բաժան-բաժան են եղել։

Սակայն ոչ մի կուսակցութեան պառակտումն այնպէս մեծ, այնպէս աղմկալի չէ եղել, որքան ֆրանսիական սոցիալիստներինը։ Ներկայումս ամբողջ մամուլը զբաղված է նրանով։ Ցայտնի է, որ պարլամենտում սոցիալիստների չէֆ Միլլերանը Վալդէկ-Ռուսսոի կազմակերպած մինիստրութեան մէջ առևտրի մինիստրի պօրտֆէյլը յանձն առաւ։ Սոցիալիստների բանակում Միլլերանի այս անսպասելի վարմունքը ահագին վէճ, ահագին երկպառակութիւն առաջ բերեց։ Իր կուսակիցների մի ստուար բազմութիւն գտաւ, որ նրա այդ քայլը դաւաճանութիւն է սոցիալական սկզբունքների տեսակէտից, որովհետև մի մարդ չէ կարող սոցիալիստ լինել և դրա հետ միասին մի բուրժուական կառավարութեան մէջ պաշտօն յանձն առնել, մանաւանդ որ այդ կառավարութեան գլուխն է Վալդէկ-Ռուսսոն, կապիտալիզմի խոշոր ներկայացուցիչներից մէկը։

Մեղադրանքի միւս աւելի խոշոր կէտը Միլլերանի դէմ այն է, որ այս մինիստրութեան մէջ զինուորական մինիստրը գեներալ Գալլիֆէն է, որ 1871 թուին կօմմունային ճնշելու ժամանակ արտակարգ խստութիւններ է գործ դրել կօմմունիստների դէմ և տասնեակ հազար ֆրանսիացիներ է կոտորել։ Սոցիալիստները չեն կարողանում ներել, որ Միլլերանը ընկեր է այժմ այն գեներալին, որի ձեռքերը, իրանց ասելով, ներկած է իր հայրենակիցների—պրոլետարիատի արիւնով։ Սոցիալիստների միւս մասը, համեմատաբար աւելի ստուար, գլուխ ունենալով Ժօրեսին և Բօանին, պաշտպանում է Միլլերանի քայլը, համարելով այդ մի խոշոր յաղթանակ սոցիալիզմի, որովհետև, ասում են, սոցիալիզմը չէ կարող անտարբեր դիտող հանդիսանալ կատարվող հասարակական երևոյթների առաջ, ինչ դասակարգի և վերաբերվելիս լինի այդ, որ նա չը պէտք է անմասն մնայ հասարակական կեանքի ղեկավարութեան գործում։ Նոյն այդ սկզբունքների հիման վրա էր, որ Ժօրէս իր «La Petite République-ով» յանձն առաւ Դրէյֆուսի դատի պաշտպանութիւնը, համարելով այդ ճշմարտութեան և արդարութեան գործ՝ արժանի սոցիալիստների բոլոր համակրութեան ու պաշտպանութեան, մինչդեռ իր հակառակորդների կարծիքով (սոցիալիստների), դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ զինուորական դասակարգի մի ներքին խնդիր, որ արժանի չէր ոչ մի ուշադրութեան։ Այսպիսի նեղ, անարդասէր հայեցակէտը, որ արդիւնք էր մի տեսակ դասակարգային եսասիրութեան, բնականապէս չէր կարող ընդհանուր համակրութիւն ունենալ և Ժօրէս ու իր կուսակիցներն իրանց տարած յաղթանակով ոչ միայն ապացուցեցին յիշեալ հայեցակէտի կատարեալ սխալը, այլ և բոլոր սոցիալիստների համակրութիւնը վաստակեցին վերջ ի վերջոյ։

Սակայն դեռ Դրէյֆուսի խնդիրը հրապարակից չեղած, դեռ այդ պատճառով առաջ եկած տարաձայնութիւնները իսպառ չը վերացած, սոցիալիստների մէջ առաջ է գալիս այժմ աւելի խոշոր տարաձայնութիւն, աւելի մեծ պառակտումն Միլլերանի պատճառով։ Բոլոր լրագրները միաբերան ներկայ պառակտումն համարում են չափազանց լուրջ կրիզիս ֆրանսիական սոցիալիզմի։ Համարեա ամեն օր լրագրական ահագին սիւնակներ են նուիրվում այդ խընդրին, այս ու այն սոցիալական ֆրակցիաները, բանւորական կօրպօրացիաները ժողովներ են կազմում, որոշումներ կայացնում։ Որոշված է նոյնպէս օգոստոսի 3-ին կազմել ֆրանսիական բոլոր սոցիալիստների կօնգրէս այդ խնդիրը լուծելու համար։ Ժօրէս գործ է դնում իր բոլոր ճարտարամտութիւնը, հռետորական իր ամբողջ տաղանդը, պաշտպանելով մի կողմից իր ընկերոջ քայլը և միւս կողմից աշխատելով վերջնական պառակտումի առաջն առնել։ Այս նպատակով է, որ նա այս օրերս Պարիզից դէպի գաւառները գնաց իր գաղափարները դասախօսութիւնների միջոցով տարածելու համար։ Կը յաջողեցնի արդեօք, այդ ապագան ցոյց կը տայ։

Ա. Ահարոնեան

ՆԱՄԱԿ ԹԻՐԳԻՍԱՑԻՑ

—

Վան, յուլիսի 6-ին

Քաղաքիս շրջակայ ցանքերը երկու շաբաթէ ի վեր քաղուիլ սկսած են։ Հունձը միջակ է, իսկ Սարայի և Թօշապի կողմերը գրեթէ չորացած է՝ անձրևի ու ջրի պակասութեան պատճառով։

Տեղւոյս դպրոցական քննութիւններ սկսվեցան յունիսի 15-ին և վերջացան ամսոյս սկզբին։ Հոս կարող ու ձեռնհաս ուսուցիչներու պակասութեան պատճառաւ կրթական գործը շատ ողորմելի վիճակի մէջ է, այնպէս որ համեմատական հաշուով աւելի յառաջադիմութիւն ցոյց կուտայ, քան թէ յառաջադիմութիւն։ Այժմ մեր ծխական դպրոցներու կրթական գործը յանձնված է արդէն մեծ մասամբ ազէտ և խեղճ ու կրակ վարժապետներու, որոնք տղայոց միտքը բթացուցնելէ և մոլորցուցնելէ զատ ուրիշ ոչինչ կարող են ընել։ Կը մնայ յիշել բողոքականներու եկեղեցական դպրոցներու և որբանոցներու վիճակ, ուր բացի կրօնական չոր ու ցամաք դասերէ ոչինչ կաւանդուի։ Սակայն այսպիսի մթութիւններէ զուրկ երկրի մը մէջ մեծ բաղդաւորութիւն և մխիթարութիւն կարող ենք համարել մեզ միայն հայկական որբանոցի վարժարան, որ ուրիշ տարիներու նման այս տարի ևս ընծայեց ազգին 10-ն կանոնաւոր ընթացաւարտներ։ Ցիշեալ դպրոցի քննութեանց ներկայ գտնվեցան վսեմ. կուսակալ Թահար փաշան, զինուորական հրամանատար Հիւսնի փաշան, շատ մը զօրապետներ, զինուորական դպրոցի բոլոր ուսուցիչներ, թիւրք մեծամեծ պաշտօնեաներ, հիւպատոսներ, առաջնորդը իր ժողովականներով և ժողովրդեան խուռն բազմութիւն։ Քննութիւնները անցան շատ աջող կերպով. ամենքը կը հեռանային գոհ տպաւորութեան մը տակ։

Այս դպրոցը իր 21 տարվայ շրջանի մէջ մեծ օգուտներ հասուցած է քաղաքիս, տալով 50-ի մօտ կանոնաւոր շրջանաւարտներ, որք թէ ուսուցչական և թէ առևտրական ասպարէզներու մէջ բարձր դիրք մը և ժողովրդեան համակրութիւն գրաւած են։ Սակայն ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ Վանի այս վերջին քանի մը տարվայ նիւթական տագնապալի վիճակը խեղճ հիմնադրին վրա 90 լիրայի չափ (մօտ 800 բուբլու) պարտք մը առաջացուցած են։ Հիմնադիրը թէև նիւթական միջոցներէ զուրկ, աղքատ, սակայն այս պարագային ևս իր գործը ամենայն եռանդեամբ առաջ կը տանէ, իր յոյսը դնելով կրթական գործի յարգը և կարևորութիւն ճանաչող ազգայնոց վրա. սակայն եթէ օգնութիւնը անմիջական կերպով չըլլայ, դուցէ այս տարի այլ ևս չը կարողանայ շարունակել։ Արդ՝ այսպիսի հաստատութեան մը պէտքականութիւնն և գոցուելէն առաջ եկած վնասներն անհաշուելի են, զի ինչպէս ըսի, վանեցին այժմ իր մխիթարութիւնը մենակ այս դպրոցին մէջ կը գտնէ. բայց ինչ կարող է անել աղքատ վանեցին, երբ գիշեր ու ցերեկ աշխատելով մէկտեղ չէ կարող ցամաք հաց մը ևս ուտել...։ Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Reichsw» լրագիրը, խօսելով Սերբիայում կատարվող ձերբակալութիւնների առիթով, ի միջի այլոց նկատում է. «Աւստրիայի համար Ռուսաստանի բարեկամութիւնը աւելի թանգ է, քան թէ Միլանի հետ բարեկամութիւնը, իսկ նրա տարդի վարմունքը արմատականների հետ, կարող է միայն վնասել ռուս-աւստրիական բարեկամութեան»։ Լրագիրը աւելացնում է. «Միլանը մի առանձին ծառայութիւն չի լինի կատարած Աւստրիայի համար, ոչնչացնելով Սերբիայում արմատականներին, որոնք պաշտպանութիւն են գտնում Ռուսաստանի կողմից»։

—Միլանի վարմունքը դէպի Գրուիչ յուզել է ամբողջ Եւրոպան, որը այդ բանում տեսնում է միջազգային հիմնական կանոնների խախտումը։ «Pest. Lloyd» պախարակում է Միլանին ու սերբիական կառավարութիւնը, որ նա յետ կանչեց իր ներկայացուցչին առանց կանխապէս զգուշացնելու ռուսաց կառավարութեանը ու միջոց չը տալով Գրուիչին վերադառնալուց առաջ յանձնել Կայսրին իր հաւատարմագիրները։ Սերբիայի այդ տեսակ վարմունքը,—նկատում է լրագիրը,—խախտում է միջազգային յարաբերութիւնների ամենահիմնական կանոնները և երբէք չէ կարող արդարանալ Սերբիայում տեղի ունեցող դէպքերով։

—Գեներալ Բուադէֆրի գաղտնի կերպով Բէնն գնալը ու այնտեղ դատաւորների հետ տեսակցութիւնը անպայման ապացուցված է։ «Frankfurter Zeitung» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է, որ մինիստրների վերջին ժողովում որոշված է պատժի ենթարկել մի քանի բարձրաստիճան զինուորականների, նրանց թւում Բուադէֆր և Պէլիէ գեներալներին։ Գեներալ Գալլիֆէի հրամանով կատարած քննութիւնը ապացուցեց, որ, յիրաւի, գեներալ Բուադէֆր եղել է Բէննում և աշխատել է ազդել դատաւորների վրա։

—Նացիոնալիստական լրագիրները շատ են խօսում վերջին ժամանակներս գեներալ Բրիւժերի Բէնն գնալու մասին։ Նրանք հաւատացնում են, որ Բրիւժեր գնացել է ոչ թէ զօրքերը տեսնելու, ինչպէս աշխատում են հաւատացնել, այլ զինուորական դատաւորներին իր հրահանգները տալու։

—«Times» լրագրի Կ. Գօլսի թղթակիցը հա-

զորդում է, որ սուլթանի զինուորական խորհրդակիցները, նրանց հետ նաև մարշալ Օսման փաշան և Բէուֆ-փաշան, հակառակ են, որ Բաղդադում երկաթուղու գիծ անցկացնելու թոյլտուութիւնը Գերմանիային տրվի, և ընդհակառակն աշխատում են այդ բանը աջողեցնել Անգլիայի համար:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 յուլիսի

ԲԵՐԼԻՆ: Զերնօգորեան թագաժառանգի պսակադրութեան օրը, դքսուհի Իւտայի հետ, որը ընդունեց Միլիցա անունը, Բերլինի ռեսպանատան աւագ քահանայ Մայլցեվ, որը պատրաստում էր դքսուհուն ուղղափառ եկեղեցու ծոցը մտնելու, ստացաւ Զերնօգորեան իշխանից հետեւեալ հեռագիրը. «Ի սրտէ շնորհակալ եմ թէ շնորհաւորելու համար, և թէ ձեր հոգևոր աշակերտուհուն պատրաստելու աշխատանքի համար: Ցուսով եմ, որ նա կը սիրէ իր նոր հայրենիքը:»

ՊԱՐԻԶ: Պատի-դը-Կալ, քննութիւնը դադարեցնելու պատճառով, արձակված է բանից:

ԲՐԻՒՍԷԼ: Մինիստրների խորհուրդ գումարվեց առաւօտեան: Մինիստրները միաձայն կարծում են, որ ի նկատի առնելով երէկվայ յանձնաժողովում տեղի ունեցած ընտրողական ըէֆորմի ձայնատուութիւնը, մինիստրութիւնը պարտաւոր է հրաժարական տալ: Խորհուրդը վերջանալուց յետոյ, մինիստր-նախագահը թագաւորին յանձնեց ամբողջ մինիստրութեան հրաժարականը:

ԼՕՆԴՕՆ: Դեսպան Պաունսեֆոտ, որ պատուիրակ էր Հաագայի կոնֆէրէնցիայում Անգլիայի կողմից, պէրի տիտղոս ստացաւ:

ԿԻԼ: Վերադառնալով հարաւային ճանապարհորդութիւնից, կայսրը ընդունեց այստեղ խարիսխ գցած դանիական զրահակիր «Իզեր» նաւի հրամանատարին:

ԲՐԻՒՍԷԼ: Մինիստրների հրաժարականի պատճառը առաջ է եկել յանձնաժողովի որոշումից, որ վճռել է մերժել ընտրողական ըէֆորմի ծրագիրը:

21 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կարսի նահանգի զինուորական նահանգապետ գեներալ-մայոր Օղինցով նշանակվում է Բագուի նահանգապետ:

ԹՐԻՍՏԻԱՆԻԱ: Միջազարլամենտային կոնֆէրէնցիան նիստ կազմեց կէսօրից յետոյ: Որոշվեց՝ միաժամանակ քննութեան ենթարկել միջնորդ դատարանի և զինադադարի ծրագրի 1, 4 և 7-րդ կէտերը: Որոշումները կընդունվեն Հաագայի կոնֆէրէնցիայի աշխատանքների հետ միասին: Նոյնպէս քայլեր կանվեն համաձայնութիւններ կայացնելու միջնորդ դատարանի մասին: Այդ մտքով որոշում մշակելու համար յանձաժողով ընտրվեց:

ՄԱԴՐԻԴ: Զինուորական բարձրագոյն դատարանը քննում է Սանտ-Եագօի անձնատուր լինելու վերաբերեալ գործը: Գեներալ Պարեխա, պաշտպանվելով, պնդում է, որ քաղաքը ղրկված էր ուտեստի պաշարից, որ կռիւը արիւնահեղ էր, բայց քաղութիւնը ժամանակակից պատերազմներում բաւական չէ: Գեներալ Տօրալ պնդում է, որ Սանտ-Եագօում միջոցներ չը կային պաշտպանվելու համար: Բլանկօ ասում է, որ նա անդադար պնդում էր թէ հարկաւոր է դիմադրել, որ Տօրալ անձնատուր եղաւ առանց թոյլատուութեան:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

20 յուլիսի

Մուրհակների ընթացքը

Երեք ամսով	Լոնդոնի վրա	10 ֆունտ	93,95
„ „	Բերլինի վրա	100 մարկ	45,82½
„ „	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,30
Չեկը	Լոնդոնի վրա	10 ֆունտ	94,95
„	Բերլինի վրա	100 մարկ	46,30
„	Պարիզի վրա	100 ֆրանկ	37,60
Բօրսային դիսկոնտ			6—7½
4% պետական ընկնում			100⅛
4% ազն. կալ. բանկի դրամ. թղթ.			98⅞
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի			98⅞
5% վերճակ. տոմս. առաջին ներքին փոխ.			294
5% „ „ երկրորդ „ „			253
5% „ դրամ. թղթ. ազն. կալ. բանկի			206
5% ոսկու բենամ			
5% դրամ. թղթ. փոխ. հող. վարկի ընկ.			181
4½% ներքին երկաթուղ. փոխ. 1890			100⅛
նոյնը 1892			100½
5% Թիֆլիսի վարկի ընկերք.			100
4½% Թիֆլիսի կալուածատ. բանկի			95
6% Ռուբլայիսի կալուածատ. բանկի			102
5% „ „ „ „			99
Ակցիաները Ռուս. առևտր.-արդիւն. ընկ.			287
„ Երք. Նոբելի նաւթ. ընկերք.			655
„ Կասպիական ընկ.			652
„ Բաղուայ նաւթ. ընկ.			823

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

№ 1 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բաղուից գուրս է գալիս ցեր.	4 ժ. 15 ր.	գիշ.	12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 ժ. 40 „	երբ.	6 „ 38 „
Թիֆլ. գուրս է գալիս	„ 9 „ 10 „	երբ.	7 „ 37 „
Բաթում է հասնում երբ.	8 „ 32 „	առ.	8 „ 12 „
№ 2 գնացքը:		**№ 4 գնացքը:**	
Բաթումից գուրս է գալիս առ.	9 ժ. 15 ր.	երբ.	9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում երբ.	8 ժ. 53 „	առ.	9 „ 45 „
Թիֆլիսից գուրս է գալիս	„ 9 „ 23 „	„	11 „ 32 „
Բաղու է հասնում ցեր.	1 „ 04 „	„	6 „ 15 „

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հէնդ հոդու համար

Թիֆլիսից գուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.	
Գիշերում է Մլեռում		Պասանաուր	
Վլադիկավկազ հասնում է	7 ժ. 20 ր. երբ.	9 ժ. 20 ր. երբ.	
Վերց հոդու համար (չեն գիշերում)			
Թիֆլիսից գուրս է գալիս	1 ժ. ցերեկ.	7 ժ. երեկ	
Վլադիկավկազ հասնում է	3 „ 25 ր. երբ.	9 ժ. 50 ր. երբ	

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժական, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒԲԿՈ—1½—2 ժ. ներքին և միաձեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—6½—7½ ժ. վիրաբուժական հ.:
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խրխի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարդելով. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
9—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՅՖԷԼԴ

Մաղերեան փողոց, № 5.

որ մասնագէտ է կաշու, միզասեռական (ելեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.
12—60

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ

Խ. Մ. Կարա-Մուրզան

վերադառնալով Ռուսաստանի ճանապարհորդութիւնից, կազմում է կոնցէրտական խառն խումբ, որը կը լինի թիւով 75-րդը: Մասնակցել ցանկացողները հրաւիրվում են կրկնողութիւններին պարերի ուսուցիչ պ. Ինոնաչենցու դահլիճը, Ճավճավաձեան փողոցում, ամենայն օր, բացի հինգշաբթի օրերից, երեկոյեան ժամը 7-ին: Կոնցէրտը կը լինի 15 օրից յետոյ: 2—3

ՆՈՐ ԼՈՒՍ ՏԵՍԱԻ ՊԱՏԿԵՐՈՎ

ՊՈՒՇԿԻՆ

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Գինը 40 կոպ.

Դիմել –Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ կամ Tiflis (Russie), Société de la publication des livres arméniens.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԳՐՎՈՂՆԵՐԸ ընկերութեան հրատարակութիւններից ընտրում են 8 Ր. գիրք և վճարում են տարեկան ՎԵՑ ՌՈՒԲԼԻ: 1898 թ. տեղեկագիրը և գրքերի ցուցակը ուղարկվում է ցանկացողներին: 5—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (4/16 օգոստոսի) ՄԻՆԳՐԵԼԻ չոգենաւը, նաւապետ ՇԷԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին տարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բաբեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի և Մայսուրեանցի քարվանսարա: ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մութաֆեանցներին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսոնին: (Ա. Հ. Չ.) 1—20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենավայր ձեռքերի ուղղելը:

Պարապմունքները սկսվելու են 1899 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան,
ՍՕԼՕԼԱԿ, Սերդիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (9 22) 6—20

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մաշթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը:
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:
(Ա. Հ. Չ.) 55—100

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի
ՔՐԻՍՏԱՓՈՐ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հեղինակի պատկերով)

Բաժանորդագինն է 15 կոպէկ, տպվելուց յետոյ թանգ կը լինի: 5—5

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հոբեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոգեկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն: Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ:

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հոբեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում:

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տէլէֆոն № 749), գործարան. տէլէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆոն № 451. (Ա. Հ. Չ)

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Іюля 1899 г.
Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.